



Վահան Տերյան

Միայնություն

Տաղտկահնչյուն ու միաձայն օրերն իրենց երգն են երգում.
Միայնություն՝ն, դու ես անձայն ցավըս օրրում քո օրերգում:

Եվ անցյալի խաբեական ցնորքներն են մեղմ օրորվում,
Նոքա անդա՛րձ, նոքա չկա՛ն, նոքա մեռա՛ն հեռու հեռվում:

Վհատումն է հոգիս գրկել, անհուսությունն անհուն փովել,
Ի՞նչ խոսքերով, ինչպե՞ս երգել և ի՞նչ սրտով հիմա սիրել:

Էլ ի՞նչ հույսով սիրտըս հուզեմ, ի՞նչ երագով ամոքեմ ինձ
Եվ ո՞ր կողմից բախտ սպասեմ անվախճան երգ վիշտ ու թախիծ

Անցե՛ք, հուշեր իմ ապարդյուն, դարձեք ընդմիշտ մոռացված էջ ,
Անհուն փովիր, սև լռություն, միայնություն իմ հոգու մեջ: